

Հայաստանի Հանրապետության Հիմնադրման 88 Տարեդարձի Առթիվ

27 Մայիս 2006
Երուսաղեմ

Ոչ պակաս խանդավարությամբ եւ ոգեւորությամբ քան նախանցեալ տարիները այս տարի ալ Մայիս ամսու սկիզբէն գործի լծուեցաւ Երուսաղեմի Հ.Ս.Ը.Մ.ի մասնաճիւղի մարզական յանձնախումբը կազմակերպելու մեծ տօնի առթիւ կայանալիք ֆուտպոլի մրցաշարքը:

Շատ շուտով, Հայֆայի Հ.Ս.Ը.Մ.ի մասնաճիւղը արձագանգեց տարուած աշխատանքներու ու փափաք յայտնեց այս տարի մեծերու եւ նաեւ փոքրերու ֆուտպոլի կազմերով ներկայանալ մրցաշարքի: Ի զարմանս բոլորին չի ուշացաւ Եաֆայի Հ.Ս.Ը.Մ. Հայկաշէնի հեռաձայնը, որը նաեւ փափաք կը յայտնէր մասնակցելու մրցաշարքին զոյգ կազմերով, փոքրերու թէ մեծերու, հակառակ որ նախանցեալ երկու տարիներուն Եաֆայի Հ.Ս.Ը.Մ.ը կազմակերպչական դժուար պայմաններու բերումով գրեթէ միայն անուանական մասնակցութիւն բերաւ մրցաշարքերուն:

Այսուհանդերձ տարւոյս խանդավարութիւնը բերաւ իր դրական անդրադարձը նաեւ Ս. Աթոռոյս Դպրոց դասու վրայ, որոնք փափաք յայտնեցին ժառանգաւորաց թէ ընծայարանի անուամբ մասնակից դառնալու Մայիսեան փառատօնի մրցաշարքին:

Առդարեւ, Շաբաթ 27 Մայիսի յետ միջօրէին հեռաւոր Հայֆայէն, Եաֆայէն թէ Երուսաղեմէն ժամանաց Հ.Ս.Ը.Մ.ականներ թէ համակիրներ, աւելի քան 300 հոգի, կը խճողէին ժառանգաւորացի դաշտը:

«Մեր Հայրենիք»ի երգեցողութենէ ետք սկիզբ առին խաղերը, փոխն ի փոխ մրցեցին Հայֆայի Հ.Ս.Ը.Մ.ը եւ Եաֆայի Հ.Ս.Ը.Մ.ը որից դուրս եկաւ Հայֆան յաղթական, այս արդիւնքէ ետք իրար միչեւ մրցեցին Երուսաղեմի Հ.Ս.Ը.Մ.ը եւ ժառանգաւորացը:

Ձոյգ հանդիպումներէն յաղթական դուրս եկաւ Հայֆայի Հ.Ս.Ը.Մ.ը թէ Երուսաղեմի Հ.Ս.Ը.Մ.ը, որոնք իրար միչեւ կատարեցին աւարտականը որից դուրս եկաւ Հայֆան յաղթական, իսկ Երուսաղեմը գրաւեց 2րդ դիրքը:

Ա. խումբերու միչեւ կայացած խաղերու ընդատումներու ընթացքին մէջ ընդ մէջ մրցեցին Հայֆայի, Եաֆայի թէ Երուսաղեմի փոքրերու խումբերը, ուր դարձեալ Հայֆան գրաւեց փոքրերու ալ ախոյեանութիւնը:

Վերջապէս, այս բացառիկ միջոցառումը տեւեց մինչեւ երեկոյեան ժամը 9ը, երբ Երուսաղեմի Հ.Ս.Ը.Մ.ի ատենապետը օրուան բաժակները փոխանցեց յաղթական Հայֆայի Հ.Ս.Ը.Մ.ի մարզական պատասխանատուներուն:

Աւելի քան 6 ժամ տեւող լարուած, ջղային, յոգնեցուցիչ բայց եւ օրինակելի այս հանդիպումէն սպառած մարզիկները թէ հանդիսականները բաժնուեցան դաշտէն, մօտ օրէն Սեպտեմբեր 21ին, վերանկախացած Հայաստանի 15ամեակին առթիւ միաւորուելու մտադրութեամբ:

Նկարներ տեսնել Անգլերէն բաժնին մէջ: